

Վերջին թագավորը

Tamara Andriasyan

Չայրս մահացավ անցած տարի՝ հունիսին: Մի ամբողջ շաբաթ մայրս, եղբայրս ու իր կինը պայքարում էին հորս կյանքի համար, բայց հայրս արդեն թույլ էր ու երեւում: Մահվան պառավն իր գերանդին գրկած կանգնած էր սենյակի անկյունում ու նայում էր հորս լուսավոր ճակատին: Ես զանգեցի հորս հետ խոսելու ու ասելու, որ սիրում եմ, երբ արդեն շատ ուշ էր ու բանը բանից անցել էր, բայց հայրս հասկացավ: Նայեց երկու տարեկան աղջկաս ու ժպտաց իր մառախուղով ու զառանցանքով պատած մեռնող աչքերով: Չնայած համարյա ոչինչ արդեն չէր հասկանում, բայց դեռ սիրում էր եւ իր սերը կարելոր էր երկուսիս համար: Երբ մարմինդ մեռնում է, սերդ դեռ կարող է ապրել: Երկուսս այդ պահին իմացանք դա:

Երբ եղբայրս զանգեց ասելու, որ մահացավ՝ շատ մեղմ էր ինձ հետ: Եթե մայրս ասեր՝ մինչեւ կյանքիս վերջ չէի մարսելու: Ամբողջ դրաման ու ուշադրությունը կուղղեր իր անձին՝ առավելագույն խղճահարություն ստանալու համար: Մորս պոռթկումները չէի մարսելու: Բայց եղբայրս զանգեց ու մեղմ էր ինձ հետ: Չուզեց ինձ ոչնչացնել տեղում, ուղղակի հեռվից շատ զգույշ ցավ պատճառեց, ինչն անխուսափելի էր: Այդ ցավը մտավ սրտիս խորքը, որպեսզի հանել չկարողանամ: Բայց ես նման նպատակ չեմ դնում առաջս: Թող մնա, որ հիշեցնի ինձ հորս մասին, այն մասին, թե ինչպիսի հայր եմ ունեցել: Ընդմիջտ կունենամ այդ ցավը ու եղբորս մեղմությունն իմ հիշողություններում:

Ես եվ եղբայրս հորս թաղմանն էինք երեւանում, քույրս մնաց Կոպենհագենում:

Անցավ կես տարի: 2022 թվականի ձմռանը թախտին պառկած՝ ես պատմում էի հոգեվերլուծաբանին իմ առօրյան: Մեծամասամբ՝ հորս մասին: Դեռ մահվանից մի տարին չէր բոլորել:

Երագումն հայրս գալիս էր ինձ այցելելու: Մեկ անգամ. Տեսա նրան պապուս թելատակին պառկած՝ ինչպես հաճախ բալիկս է պառկում,

գլուխը թեւատակիս մեջ մխրճելով: Երագս քնքշության մասին էր: Այն մասին էր, որ հայրս ասես երեխա լինի՝ պապուս գրկում:

Եւ ինչպես քովիդի առաջին տարում, երբ բոլորը տարված էին ահ ու սարսափ առաջացնող այդ մղձավանջով, իսկ մեր ընտանիքի կենտրոնում հայրս էր քաղձկեղից հյուժված, այժմ եւս, չնայած փետրվարյան ցնցումներին, իմ բացահայտ շոկին, առաջին տեղում հայրս էր, ում կարիքը դեռ ունեի, ում կարոտում էի:

Մեկ անգամ հորս կանչելու համար ստիպված եղա ծխել: Իսկույն հայրս հայտնվեց երագիս մեջ՝ ինչպես ջինը լամպից: Միշտ շատ էր ծխում: Ստածեցի, որ եթե ծխի հոտը զգա, իսկույն կգա, եւ այդպես եղավ: Հիշում եմ ծխած մատներիս հոտը երագի մեջ: Հիշում եմ, որ հայրս լավ տրամադրություն ուներ:

Ասաց. “Գիտես, անուկս Ռուդիկ կամ Ռադիկ է”:

Ասացի. “Շատ լավ, ես դրա մասին չգիտեի”:

Հետո ասացի վերլուծաբանիս, որ դա ճիշտ չէ, իրականում հորս անունը Լեւոն էր, ինչպես Կիլիկիո վերջին թագավորին էին կոչում: Բայց վախենում եմ, որ հորս կսկսեմ մոռանալ, հիշողություններս արդեն աղոտ են: Երագս այդ վախի մասին է:

1198 թվականի հունվարի 6-ին, Կիլիկիայում հիմնադրվում է հայկական թագավորություն: Իսկ 1342 թվականին Կիպրոսում ծնվեց Կիլիկիո հայկական թագավորության վերջին թագավորը՝ Լեւոն VI: Խաչակիր ասպետ Լեւոն VI-ը հայկական դը Լուսինյանների տոհմից էր: Հայրը Ֆրանսացի էր, մայրը՝ վրացուհի: Սեպտեմբերի 14-ին Լևոնը ժամանեց Սիս մայրաքաղաքը և ութ ամիս անց Ս. Սոփիայի մայր տաճարում լատինական ծեսով օծվեց թագավոր, ապա նաև հայկական ծեսով:

Եգիպտոսի սուլթանի զորքերը 1375 թվականի հունվարի 5-ին պաշարեցին Սիսը: Լևոնը ապրիլի 22-ին հաշտություն խնդրեց և բերդը հանձնեց թշնամուն: Լևոնը իր ընտանիքի, կաթողիկոսի և շուրջ 20 հայ մեծամեծների հետ գերեվարվեց Կահիրե: Լևոնի խոստովանահայր Հովհաննես Դարդելի ջանքերով, Կաստիլիայի Հովհան I և Արագոնի Պեդրո IV թագավորների միջնորդությամբ 1382 թվականի սեպտեմբերին Լևոնը գերությունից ազատվեց և մեկնեց Եվրոպա: 1383

թվականի ամռանը նա հասավ Կաստիլիա, որի թագավորը Լևոնին պարգևեց Մադրիդ, Վիլյարեալե, Անդուխար քաղաքները և խոստացավ օգնել նրան Կիլիկիայի գահը վերստանալու համար: Կյանքի վերջին տարիներին Լևոնն ապրեց Փարիզի Սենտ–Օուեն պալատում, որը նրան 1384 թվականին հատկացրել էր Ֆրանսիայի Շառլ VI թագավորը:

Չայրս պատմում էր, որ Փարիզում եղավ Սեն-Դենի բազիլիկի գերեզմանատանը՝ Լևոն VI-ի գերեզմանոցում: Մենք հորս, Լևոն Անդրիասյանին, թաղեցինք Չայաստանում՝ Օջականում, որտեղ ծնվել է պապս, Չրանտը:

Եղբայրս հորս տապանաքարի եսփիզն ինձ վերջերս ուղարկեց ինտերնետով, որպեսզի հավանություն տամ. Տուֆից տաշած ալիք՝ համապատասխան մակագրությամբ: Չգիտեմ, թե ալիքն ի՞նչ էր խորհրդանշում՝ եղբորս չհարցրեցի: Կորցրած “ծովից ծով” Չայաստա՞նը, հո՞րս:

Չորս թաղեցինք մեր շատ հին տոհմական գերեզմանաքարերի շուրջ, որտեղից բարձունքից անտանելի սիրուն տեսարան էր բացվում դեպի Օջական գյուղի բնակելի տները: Մայրս ասաց. “Լևոնին դուր կգա”: Օջականի Չրանտ պապուցս բացի մնացյալ բոլոր նախնիներս կյանքը մեծ տարիքում վերսկսեցին նոր երկրում՝ թուրքական հալածանքներից փախչելով: Այդպես՝ կյանքը նրանց *tabula rasa* պարգևեց: Բայց նրանք հանցագործներ չէին, որպեսզի մեծ հաճույքով վայելեին պատմությունը ջնջելու ու կյանքը վերստին սկսելու բերկրանքը: Պառզապես հայեր էին ում բախտը չէր բերել: Տրաբզոնում, կամ Արթավինում ներկայումս հորս թաղել չէինք կարող: Չայրս Օջականը սիրում էր: Սեփական քրտինքով տուֆից երկհարկանի տուն կառուցեց, բերքատու ծառեր տնկեց, մեզ մեծացրեց. Ինձ, քրոջս, եղբորս:

Արդյո՞ք հիմա արժե ամուսնուս ստացած աշխատանքի առաջարկն ընդունել, որպեսզի մեր փոքրիկ ընտանիքով տեղափոխվենք Կիպրոս: Այս հարցը ինչ-որ ժամանակ աներես ճանճի նման բզզում էր ուղեղիս ինչ-որ անկյունում: Կիպրոսի հայկական թագավորի մասին ինչ-որ հետաքրքիր հետքեր միգուցե տեսնեմ տեղի թանգարաններում: Վերջապես՝ Վամիկ Վոլկանն է ծնվել Կիպրոսում,

ինչը լուրջ փաստարկ համարվել չի կարող, սակայն հետաքրքիր երանգ մտցրեց մտորումներիս տրամաբանության եւ ընթացքի մեջ:

Թուրք հեղինակների կարդալիս միշտ կարծես պատասխաններ եմ փնտրում հայ-թուրքական հարաբերությունների մասին: Հաճախ պատասխանների փոխարեն՝ այդ հեղինակներն ինձ ուղղակի տալիս են ինչ-որ ծանոթ զգացողություն: Նմանությունների ու ծանոթ մտածելակերպի զգացողությունը: Ֆրոյդն այդ անվանեց “Փոքր տարբերությունների նարցիսիզմ”: Պատմության ամենադաժան և արյունալի առճակատումների ընթացքում ապշեցուցիչ են ոչ այնքան հակառակորդ խմբերի միջև եղած տարբերությունները, այլ ընդհակառակը՝ նրանց նմանությունները:

Աստղագուշակ եւ մոգ Ալլան՝ ընկերուհիս, ասաց. “Կարող ես մեկնել Կիպրոս: Չեռքերիդ նախշերի մեջ եմիզրացիա չտեսա, սակայն շռայլ մշտական ճանապարհորդությունների նշանը տեսնում եմ: Միշտ դեգերում ես, բայց հետո վերադառնում”: Ես միշտ դեգերում եմ, հետո վերադառնում ինչ-որ ժամանակ անց ինչ-որ պատճառով: Ռեպրոշմանի նման մի բան եմ խաղացնում. հեռանում եմ, հետո նորից մոտենում: Եւ պարզ չի իրականում, որ մեկս է մայրն ու ավագը, իսկ ով երեխան:

Երբ շատ փոքր էի, թվում էր, թե մի հարյուր տարի կանցնի, մինչ ես կսովորեմ փողոցն անցնել: Հիմա թվում է, թե ես հայրենիքիցս ավելի մեծ եմ, քանի որ տարբեր երկրներում ճանապարհորդելու եւ բնակվելու իմ փորձը փոքրիկ հայրենիքիս չափերից ու սահմաններից դուրս է ու ավելի լայն: Բայց Երեւանը տունս է: Այն կետը, ուր մշտապես, հազարամյակներ շարունակ, արեւելքը բախվում է արեւմուտքին ու երբեմն նոր կյանք ստեղծում: Հոգեվերլուծությունը հանդիպում է մոգությանը: Երեւանը՝ հոգուս բնակավայրն է, նույնիսկ եթե ես մարմնովս հանդերձ հեռու եմ գտնվում: Ու Երեւանի գիշերներում լուսնի ափսե՛ն է գլորվում:

Ասում են, թե տրավմայի տրանսգեներացիոն փոխանցումը վերաբերում է ոչ միայն զոհին, այլ նաեւ ագրեսորին: Որ այն հավասարապես տպվում է երկուսի գենետիկ պատմության մեջ եւ փոխանցվում, որպես պատտերն եւ որպես անտեսանելի տոհմական վերք երկուսի ժառանգներին: Այդպես են ասում: Ընդհանրապես ասում

են, թե պատտերևները մեկ ընտանիքի ներսում շրջանցելու եւ կրկնվելու միտում ունեն: Էմիլ պապիկիս իրերը դասավորելիս՝ իր մահից հետո, գտա Լոնդոնի տուրիստական քարտեզը՝ Լոնդոն բասը առաջին էջին դաճված: Ասես ոչինչ էլ չէր փոխվել անցած յոթանասուն տարվա ընթացքում անգլիական քարտեզների դիզայնի բնագավառում: Երբ թե ինչպես պապս հայտնվեց Լոնդոնում Սովետական Միության փակ սահմանների պայմաններում՝ ինձ համար անհայտ է: Առավել եւս անհայտ է այն փաստը, թե ինչու այն ժամանակվա համար այդ բացառիկ փաստի մասին ոչ ոք չպատմեց ինձ մինչ հիմա:

Երբ սովորում էի Միացյալ Թագավորությունում, Օքսֆորդի փողոցներից մեկում, շատ ուշ երեկոյան հանդիպեցի թուրք տղամարդու: Նա մի փոքր խանութ ուներ Քրիստոս սթրիթի վրա, հիմնականում միրգ ու բանջարեղեն էր վաճառում:

Մի երեկո իմ ներկայությամբ սկսեց խռիռալ, հազալ ու փնթփնթալ ու ծերուկի ձայնով խոսեց թուրքերեն՝ ինքն իր հետ որպես զրուցակից: Մի քանի նախադասություն անց շատ բարձր մանկական \$ալցետով, փոքրիկ աղջկա տնազ անելով կրկին թուրքերեն մրմնջաց: Թուրքերեն ոչ մի բառ չգիտեմ, բայց լեզվի հնչողությունը տպված է ուղեղիս մեջ ու միշտ անխտիր այն կտարբերեմ: Չգիտեմ լեզուն էր, թե խանութպանի հոգեկան խանգարումն էր, որն անվանում են սովորաբար՝ անձնավորության երկատում, բայց ահը պատեց ներսս: Ներսից բոլոր օրգաններս կատատոնիկ վիճակում սառեցին: Մի կերպ ստիպեցի ինձ ձեռքս բարձրացնել, որպեսզի արագ ինչ-որ մեքենա կանգնեցնեմ: Երեւի կյանքումս, նույնիսկ ամենադաժան փորձությունների ընթացքում, նման ահ ու սարսափ չեմ ապրել: Ծեր մարդու ձայնը, որը վայրկենորեն փոխվեց վախեցած բալիկի վնաստոցի՝ տպվեց ուղեղիս գալարներին: Փսիխոտիկ սարսափի ծավալն ահագին էր, անսահման՝ եկավ հասավ ինձ ու կպավ պինդ: Սարսափն այդ վարակիչ էր, տոքսիկ, թափանցում էր մաշկի տակ եւ տպվում մաշկի վրա որպես դաճվածք կամ սպի: Այն ոչ միայն իմ բնական վախն էր մթությունից, խելահեղ տղամարդուց՝ այն նաեւ նրա ներքին հետապնդող տագնապն էր, որը շերտատվեց եւ դրվեց ինձ մեջ,

առանց իմ թույլտվության: Որոշ մարդիկ կոչում են այն պրոեկտիվ իդենտիֆիկացիա: ԵՎ ես, որպես հայ, այդ վայրկյանին ահավոր զգայուն էի դրա նկատմամբ, քանի որ դիմացինս ոչ միայն ցնորհված էր, այլ նաեւ թուրքերեն էր խոսում:

Երկու սիրածս թուրք գրողները՝ Էլիֆ Շաֆաքն ու Օրիան Պամուկը պատմում են մոգերի, դեւերի, դերվիշների մասին: Ստամբուլի մասին: Վերամշակելով բոլոր սեփական անձնական եւ տոհմական տրավմաներն այնպես, ինչպես ես՝ կարդալով նրանց, համոզվելով, որ նրանք մարդկանց մասին են գրում՝ ոսկերից, արյունից, մկաններից կազմված: Գիժ խանութպանից ստացած աֆֆեկտով կիսվում եմ իրենց հետ, որպեսզի տանելի դառնա:

Կիլիկյան Հայաստանում պաշտոնական լեզուներն էին՝ հին հունարենը, հին հայերենը, լատիներենն ու ֆրանսերենը: Դա հայ-ֆռանսիական հարաբերությունների սկիզբն էր ըստ երեվոյթին, որը բերեց Ազնավուրի առաջացմանը: Կամ եթե ավելի լուրջ՝ հարատեւ հավատարիմ ընկերության: Լեւոն թագավորի կինը, Կահիրեում գերեվարված, հուսահատ ու վշտով լի՝ ազատվելուց հետո տեղափոխվեց Երուսաղեմի Սրբ. Հակոբեանց եկեղեցի ուր ապրեց ցմահ:

Հայրս այն մարդն էր, ով ինձ Լեւոն Լուզինյանի մասին պատմեց: Հայրս պատմություններից էր բաղկացած: Հայրս կարծես պատմությունների ջրհոր լիներ: Պատմությունները գունեղ էին՝ վառ փոխաբերություններով լցունած: Հայրս էր, որ պատմություններ սիրել ինձ սովորեցրեց, քանի որ ամեն անգամ իր պատմվածքները լսելիս՝ հավատում էի եւ կարծում, թե իրենից լավը չկա:

Եղբայրս աղջկաս տարիքին էր, երբ հարցրեց հորս. “Պապ, իսկ դու Ջեկի Չանից ավելի ուժե՞ղ ես”:

Հայրս ասաց. “Այո”:

“Պապ, իսկ դու Ստալլոնեից ուժեղ ես”:

Հայրս պատասխանեց. “Այո”:

“Պապ, իսկ դու Աստծուց ուժե՞ղ ես”:

Հայրս խառնվեց իրար, մի քիչ կարմրեց, ասաց. “Ոչ, Աստծուց ուժեղ չեմ”:

Այդպես կհիշեմ հորս:

Ամեն մարդ՝ իր փորձի, գիտելիքների եւ հանգամանքների հանրագումարն է: Եւ միգուցե իր նախնիներից տրված Էներգիաների: Եւ եթե սեր փոխանցես երեխաներիդ՝ ապա սեր կստանան, իսկ եթե ատելություն եւ ագրեսիա՝ նույնը կտեսնեն նրանք կյանքում մյուսներից: Չայրս այն մարդն էր, որ իր մահով միավորեց մեր ժամանակին պառակտված ընտանիքը: Եվ միգուցե դա էր իր նպատակը: Պապիկի մասին աղջկաս պիտի պատմեմ, որ նա զգայուն մարդ էր: Չոգին քրքրվում էր անարդարություն տեսնելիս: Չորս շնորհիվ է, որ ուր էլ գնամ, փոխադարձ սեր եմ ստանում իմ կյանքում, որովհետեւ հորս սերն իմ նկատմամբ անսահմանափակ էր: Սովորաբար երեխան է սիրում ծնողին անվերապահորեն: Բայց մեր դեպքում կարծես հայրս էր ինձ սիրում անվերապահորեն: Եւ հորս անսահմանափակ սերն իմ նկատմամբ ինձ դեռ երկար տարիներ կպաշտպանի:

Չորս մասին հիշողություններից ներսս ամեն ինչ ճմրթվում է: Ես հոգեվերլուծաբանի ներկայությամբ՝ թախտին ճմրթվում եմ: Կարոտում եմ քեզ շատ, պապ: Լավ ընկեր էիր, լավ մասնագետ, լավ ամուսին, լավ զավակ, լավ հայր: Մնաս բարով, հողդ թեթեվ լինի: Սիրով՝ Տ.: